

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԸ ՄԵՐ ՄԷՋ

26 Նոյեմբեր Զորեւաբքի միջօրէին, Ս. Քաղաք ժամանեցին Ս. Էջմիածնի Ամեն. Տեղակալին կողմէ, Կիլիկիոյ Արքունի կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար զրկուած զոյգ պատուիրակները՝ Դեր. Տ. Արսէն Արեւաթ. Ղլսնեան եւ Պ. Համբարձում Առաքելեան:

«Հաւաքաւոր» ուղի հանդիսաւոր ընդունելութիւն կատարուեցաւ գերշարգոյ նիւթերուն. առաջնորդուեցան Ս. Յակոբայ Մայր Տանարը, ուր, Դեր. Մրբազանը Ս. Գլխադրի մասրան մէջ իր ուխտը կատարելէ եւ ներկայ բազմութեան Ս. Էջմիածնի Ամեն. Տեղակալին հայրական օրհնութիւններն ու ողջոյնները տալէ յետոյ, քափօրով առաջնորդուեցան Պատրիարքարանի դահլիճը: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ողջագլուխմամբ ընդունեց Հայրենիքի «կուռնկ»ները, իրենց բերած ողջոյններովն ու օրհնութեամբ՝ Մայր Արքունոյ Միաբանութենէն եւ բաղձալի Հայաստան աշխարհէն...:

Յարգելի նիւթերը առիքը ունեցան այցելելու Ս. Արքունոյ զանազան հաստատութիւնները՝ Մայր Տանարը, Տայարանը, Մասնադարանը, զոյգ վարժարանները, ուր ուսանողութեան բերին Հայաստանի զպրոցներէն իրենց եղբայրներուն ու քոյրերուն «բարեւ»ները: Եւ ընկերակցութեամբ բանի մը վարդապետ հայրերու ուխտի զացին Ս. Յարութեան, Ս. Ծննդեան, Աստուածածնայ եւ միւս սրբաժողովները, ու շրջեցան Բաղաթա վանապատկան շէնքերն ու կալուածները:

1 Դեկտեմբեր, Երկուշաբթի երեկոյեան, Պատրիարքարանի դահլիճին մէջ բեյասեղան

մը տնուցաւ ի պատիւ նիւթերուն, որոնք յաջորդ օրը պիտի մեկնէին Անթիլիաս, մասնակցելու Կիլիկիոյ Արքունի կաթողիկոսական ընտրութեան: Հանելի եւ ընթանեկան հաւաքոյթի մը տալուորութիւնը ունեցանք ամենքս ալ, մօտաւորապէս երկու ժամ տեւող այդ երեկոյթէն, ուր խօսեցաւ Դեր. Տ. Արսէն Արեւաթ. յայտնելով իր գոհունակութիւնը Ս. Արքունոյս բարգաւաճման եւ Ս. Էջմիածնի Մայր Արքունի նկատմամբ ունեցած իր սիրալիր յարաբերութեան եւ պատրասակամ աջակցութեանը համար: Ի զիմաց Միաբանութեան եւ Պաղեսթինաբնակ հայութեան պատասխանեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը իր խօսքին վերջաւորութեան մաղբելով շուտափոյր խաղաղութիւնը ընդհանուր աշխարհին ի պայծառութիւն Մայր Արքունոյ Ս. Էջմիածնի: Ապա խօսեցան Հոգ. Տ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. եւ Նորայր, Սերովքէ եւ Եղիշէ վարդապետները, իւրաքանչիւրը, տարբեր երեսներու վրայ ցոյց տալով սեռ այն յարաբերութիւնը որ եղած է Մայր Արքունոյ եւ Ս. Արքունոյս, Մայր Հայրենիքի եւ սփիւռքի Հայութեան միջեւ: Պ. Համբարձում Առաքելեան յայտնեց իր տալուորութիւնը Ս. Արքունոյս կատարած գործունէութենէն, Միաբանութեան անդամներուն մէջ իր տեսած աշխուժութենէն՝ հանդէպ իւրաքանչիւրը եւ իրենց ստանձնած պատճօններուն. վեր առաւ մանաւանդ այն դերը զոր կը կատարէ Ս. Արքունոյ Պաղեսթինի զանազան մասերուն մէջ իրեն տանած զպրոցներովը:

Յաջորդ առաւօտ, 2 Դեկտեմբեր, յարգելի նիւթերը մեկնեցան դէպի Անթիլիաս, մասնակցելու համար Կիլիկիոյ Արքունի կաթողիկոսական ընտրութեան:

